ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

.............................................................................................................

20.04.2016թ.

Նիստին մասնակցում էին՝ Ս. Ամիրխանյանը, Մ. Մարինոսյանը, Ա. Մարուխյանը, Դ. Հովեյանը, Ա. Հովեյանը, Ս. Գապոյանը, Պ. Հակոբյանը, Գ. Ղարիբյանը
Նիստը վարող՝ քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյան
Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ***<u>ՕՐԱԿԱՐԳ</u>***

1. Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի 1-ին փողոց N24/3 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 0.00195հա մակերեսով հողակտորը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով տրամադրելու, հողամասի տարեկան վարձավճարի չափը և օգտագործման ժամկետը սահմանելու մասին:
2. Գավառ քաղաքի Կաբելագործների փողոց N8/1 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 0.00199հա մակերեսով հողակտորը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով տրամադրելու, հողամասի տարեկան վարձավճարի չափը և օգտագործման ժամկետը սահմանելու մասին:
3. Ք. Գավառ Կաբելագործների փողոց N6/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող օրինական ճանաչված 33.9ք.մ. արտաքին /26.45ք.մ. ներքին/ մակերեսով ավտոտնակը և ավտոտնակի զբաղեցրած 33.9ք.մ. մակերեսով հողատարածքը վարձակալության իրավունքով տրամադրելու, ավտոտնակի և հողամասի վարձավճարների չափերը և օգտագործման ժամկետը սահմանելու մասին:
4. Գավառ քաղաքի Բունիաթյան փողոց N5/1 հասցեում գտնվող Դավիթ Միերի Կուռոյանի կողմից ինքնակամ կառուցված, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 61.6ք.մ. մակերեսով խանութը և խանութի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 95.44ք.մ. մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարելու մասին:
5. ,,Ղ-ՏԵԼԵԿՈՄ” ՓԲԸ-ին կառուցապատման իրավունքով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի կատեգորիայի 0.015հա ընդհանուր օգտագործման հողամասերի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի փոփոխման և բջջային կայան տեղադրելու մասին:
6. Սեփականության իրավունքով Գավառ քաղաքային համայնքին պատկանող քաղաք Գավառ, Արծրունի Եղբայրների փողոց թիվ 2 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 5 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու մասին:
7. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի 2015թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
8. Գավառ համայնքի 2016թ. բյուջեի պահուստային ֆոնդից գումար տրամադրելու մասին:
9. Գավառ համայնքի 2016թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
10. Եվրոպական հանձնաժողովի ,,Քաղաքապետերի դաշնագիր” նախաձեռնությանը միանալու մասին:

ՀԱՐՑ 1

ՈՐՈՇՈՒՄ 18. Ք. ԳԱՎԱՌ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ N24/3 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00195ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱԿՏՈՐԸ՝ ԱՎՏՈՏՆԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Ս. Ամիրխանյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16 հոդվածի 20 կետի, ՀՀ Կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ ք, Գավառ Զորավար Անդրանիկի 1-ին փողոց N24/3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 0.00195հա մակերեսով հողակտորը՝ ավտոտնակ կառուցելու համար, կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին առաջարկին և հողամասի վարձավճարի չափը սահմանել տարեկան 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ մինչև 2020թ. ներառյալ օգտագործման ժամկետով:

| Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ | | |
| ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ | | |
| ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ | | |
| ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ | | |
| ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ | | |

ՀԱՐՑ 2

ՈՐՈՇՈՒՄ 19. Ք. ԳԱՎԱՌ ԿԱԲԵԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ N8/1 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00199ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱԿՏՈՐԸ՝ ԱՎՏՈՏՆԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Մարուխյանը, Դ. Հովեյանը

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16 հոդվածի 20 կետի, ՀՀ Կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ ք. Գավառ Կաբելագործների փողոց N8/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 0.00199հա մակերեսով հողակտորը՝ ավտոտնակ կառուցելու համար, կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին առաջարկին և հողամասի վարձավճարի չափը սահմանել տարեկան 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ մինչև 2020թ. ներառյալ օգտագործման ժամկետով:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 3

ՈՐՈՇՈՒՄ 20. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԿԱԲԵԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ N6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 33.9Ք.Մ. ԱՐՏԱՔԻՆ /26.45Ք.Մ. ՆԵՐՔԻՆ/ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 33.9Ք.Մ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Մ. Մարինոսյանը, Գ. Ղարիբյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20 կետի և ՀՀ կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Կաբելագործների փողոց N6/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 33.9ք.մ. մակերեսով ավտոտնակը և ավտոտնակի զբաղեցրած 33.9ք.մ. մակերեսով հողատարածքը համապատասխանաբար՝ 5085 /հինգ հազար ութսունհինգ/ ՀՀ դրամ և 10170 /տաս հազար մեկ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարներով՝ վարձակալության իրավունքով տրամադրելու ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Ալբերտ Վարդանի Սարինգուլյանին, մինչև 2020թ. ներառյալ օգտագործման ժամանակով:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 4.

ՈՐՈՇՈՒՄ 21. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՓՈՂՈՑ N5/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴԱՎԻԹ ՄՀԵՐԻ ԿՈՒՌՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 61.6Ք.Մ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ ԽԱՆՈՒԹԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 95.44Ք.Մ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ՝ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Պ. Հակոբյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16 հոդվածի 20 կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ ք. Գավառ Բունիաթյան փողոց N5/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 61.6ք.մ. մակերեսով խանութը՝ յուրաքանչյուր 1ք.մ.-ի համար 11700 /տասնմեկ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ և խանութի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 95.44ք.մ. մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1ք.մ.-ի համար 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ արժեքներով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու Դավիթ Միերի Կուռոյանին միաժամանակ վաճառքի գնին հավելելով նաև տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքի պետական գրանցման համար իրականացված վճարը, որը կազմում է 13 500 /տասներեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՅԵԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎՅԵԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 5.

ՈՐՈՇՈՒՄ 22. ,,Ղ-ՏԵԼԵԿՈՄ’’ ՓԲԸ-ԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ 0.015ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԲԶՋԱՅԻՆ ԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Ա. Հովեյանը

Հիմք ընդունելով համայնքների բնակավայրերի տարածքներում և բնակավայրերի տարածքներից դուրս գտնվող բջջային կայանների տեղակայման վայրերի հողերի նպատակային նշանակությունները համապատասխանեցնելու վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 18.12.2014թ. N01/16/6841-14 հանձնարարականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին կետի, 6-րդ գլխի 14-րդ և 16-րդ հոդվածների պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Կառավարության 30.11.2006թ. N727-Ն որոշմամբ հաստատված Գավառ քաղաքային համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունը.

   ,,Ղ-ՏԵԼԵԿՈՄ" ՓԲԸ-ին կառուցապատման իրավունքով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի կատեգորիայի 0.015հա ընդհանուր օգտագործման հողամասերի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ բջջային կայան տեղադրելու համար:

2. Խնդրել ՀՀ քաղաքաշինության նախարարին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

Կողմ (8)　　　　Դեմ (0)　　　　Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 6.

ՈՐՈՇՈՒՄ 23. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՔԱՂԱՔ ԳԱՎԱՌ, ԱՐԾՐՈՒՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻԹԻՎ 5 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/զեկ.Ա. Գևորգյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Հովեյանը, Ս. Գապոյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի 6-րդ մասովև 16 հոդվածի20 կետով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ Գավառ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող՝ քաղաք Գավառ, Արծրունի Եղբայրների փողոց, թիվ 2 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 5 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու Բաբկեն Արամի Դադիկյանին՝ նրա հետ կնքելով նշված հասցեի անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 7

ՈՐՈՇՈՒՄ 24-Ն. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Գ. Ղարիբյանը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 5 հունիսի 2002թ. ՀO-337 օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի, 16-րդ հոդվածի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 21 հուլիսի 1997թ. ՀO-137 օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով

Հաստատել Գավառ քաղաքային համայնքի 2015 թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

1. 2015թ. վարչական բյուջեի գծով պլանավորված 474236.7 հազ. դրամ եկամուտի դիմաց կատարվել է 472853.5 հազ. դրամ , որը կազմում է 99.7 %, որից սեփական եկամուտների դիմաց պլանավորված 106024.8 հազ. դրամ եկամուտի դիմաց կատարվել է 104646.4 հազ. դրամ , որը կաղմում է 98.7 %,

2. 2015թ. վարչական բյուջեի ծախսերի գծով պլանավորված 474236.7 հազ. դրամի դիմաց կատարվել է 447908.9 հազ. դրամ, որը կազմում է 94.4 %,

3. Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր է պլանավորվել 29507.2 հազ. դրամ, կատարվել է 19397.3 հազ. դրամ, որը կազմում է 65.7 %,

4.Ֆոնդային բյուջեի ծախսերի գծով պլանավորված 68278.4 հազ. դրամի դիմաց կատարվել է 66349.7 հազ. դրամ, որը կազմում է 97.2 %,

Գավառ քաղաքային համայնքի 2015թ. վարչական բյուջեի եկամտային մասը ունի հետևյալ կառուցվածքը ըստ առանձին եկամտատեսակների

| Եկամուտներ | Պլան | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|
| **Վարչական բյուջեի եկամուտներ** | **474236,7** | **472853,5** | 99,7 |
| **Հարկեր և տուրքեր** | **83717,4** | **86838,9** | 103,7 |
| Գույքային հարկեր անշարժ գույքից | **32857,4** | **24106,6** | 73,4 |
| *Գույքահարկ համայնքի վ/տ գտնվող շենքերի և շինութ. համար* | 16402,5 | 15704,3 | 95,7 |
| *Հողի հարկ համայնքի վ/տ գտնվող հողի համար* | 16454,9 | 8402,3 | 51,1 |
| Գույքային հարկեր այլ գույքից | **40400,0** | **53493,9** | 132,4 |
| *Գույքահարկ փոխադրամիջոցների համար* | 40400,0 | 53493,9 | 132,4 |
| Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճար | ***3460,0*** | ***2041,2*** | 59,0 |
| Տեղական տուրքեր | 3460,0 | 2041,2 | 59,0 |
| Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճար | **7000,0** | **7197,2** | 102,8 |
| Պետական տուրքեր ն/թ | 7000,0 | 7197,2 | 102,8 |
| *ՔԿԱԳ* | 4000,0 | 3759,5 | 94,0 |
| *Նոտար* | 3000,0 | 3437,7 | 114,6 |
| **Պաշտոնական դրամաշնորհներ** | **360642,0** | **360642,0** | 100,0 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 319445,3 | 319445,3 | 100,0 |
| Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | 32661,2 | 32661,2 | 100,0 |
| Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ | 8535,5 | 8535,5 | 100,0 |
| **Այլ եկամուտներ** | **29877,3** | **25372,6** | 84,9 |
| **Գույքի վարձակալությունից եկամուտներ ն/թ** | **19250,0** | **14786,7** | 76,8 |
| Համայնքի սեփ. համարվող հողերի վարձակալ վճար | 15500,0 | 10477,8 | 67,6 |
| Համայնքի վ/տ գտնվող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վճար | 3200,0 | 3022,4 | 94,5 |
| Այլ գույքի վարձակալությունից եկամուտներ | 550,0 | 1286,5 | 233,9 |
| **Պատվիրակված լիազորությունների ֆինանս. մուտքեր** | **7569,9** | **7565,1** | 99,9 |
| **Վարչական գանձումներ** | **1557,4** | **1370,3** | 88,0 |
| Տեղական վճարներ | 500,0 | 228,0 | 45,6 |
| Համայնքի վ/տ ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 1000,0 | 1142,3 | 114,2 |
| Վարչական իրավախախտումներից մուտքեր | 57,4 | 0,0 | 0,0 |
| Այլ եկամուտներ | **1500,0** | **1650,5** | 110,0 |

| Ֆոնդային բյուջեի եկամուտներ | Պլան | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|
| Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ | 28278,4 | 26379,9 | 93,3 |
| Վարչական բյուջեի պ/ֆ ֆ/բ կատարվող հատկացում | 40000,0 | 39969,8 | 99,9 |

## Գավառ քաղաքային համայնքի 2015թ. վարչական և ֆոնդային բյուջեների ծախսային մասերը ունեն հետևյալ կառուցվածքները ըստ գործառական դասակարգման

| Ծախսերի անվանումը | Պլան | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|
| **Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ** | **81304,8** | **73859,2** | **90,8** |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ | 61844,9 | 57355,5 | 92,7 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 8169,9 | 8084,3 | 99,0 |
| Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ | 11290,0 | 8419,4 | 74,6 |
| Պաշտպանություն | 55,0 | 53,0 | 96,4 |
| Տնտեսական հարաբերություններ | 15050,0 | 14897,5 | 99,0 |
| Շրջակա միջավայրի պաշտպանություն | 57083,6 | 55643,2 | 97,5 |
| Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն | 12500,0 | 12010,3 | 96,1 |
| Հանգիստ, մշակույթ և կրոն | 48988,1 | 37581,1 | 76,7 |
| Կրթություն | 203255,2 | 200473,4 | 98,6 |
| Սոցիալական պաշտպանություն | 6000,0 | 3900,0 | 65,0 |
| Պահուստային ֆոնդ | 50000,0 | 49490,6 | 99,0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | **474236,7** | **447908,3** | **94,4** |

| Ծախսերի անվանումը | Պլան | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|
| **Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ** | **0,0** | **0,0** | 0,0 |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ | 0,0 | 0 | 0,0 |
| Ընհանուր բնույթի այլ ծառայություններ | 0,0 | 0,0 | 0,0 |
| Տնտեսական հարաբերություններ | -7136,6 | 2863,5 | -40,1 |
| Շրջակա միջավայրի պաշտպանություն | 180,0 | 0,0 | 0,0 |
| Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն | 500,0 | 0,0 | 0,0 |
| Հանգիստ, մշակույթ և կրոն | 29904,7 | 26277,2 | 87,9 |
| Կրթություն | 44830,3 | 37209,0 | 83,0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | **68278,4** | **66349,7** | **97,2** |

Գավառ քաղաքային համայնքի 2015թ. վարչական և ֆոնդային բյուջեների ծախսային մասերը ունեն հետևյալ կառուցվածքները ըստ տնտեսագիտական դասակարգման

| Ծախսերի անվանումը | | Պլան | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|---|
| Աշխատողների աշխատավարձեր | 4111 | 53108,1 | 50234,2 | 94,6 |
| Պարգևատրում | 4112 | 3000,0 | 2990,0 | 99,7 |
| Էներգետիկ ծառայություններ | 4212 | 3929,7 | 3770,8 | 96,0 |
| Կոմունալ  ծառայություններ | 4213 | 53093,6 | 51548,6 | 97,1 |
| Կապի ծառայություններ | 4214 | 1447,6 | 1229,7 | 84,9 |
| Ապահովագրական ծախսեր | 4215 | 60,0 | 54,4 | 90,7 |
| Ներքին գործուղումներ | 4221 | 400,0 | 99,8 | 25,0 |
| Համակարգչային ծառայություններ | 4232 | 620,0 | 522,2 | 84,2 |
| Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 3134,0 | 2608,9 | 83,2 |
| Ընդանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 225892,8 | 221429,4 | 98,0 |
| Մասնագիտական ծառայություններ | 4241 | 4170,4 | 2340,7 | 56,1 |
| Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 23060,0 | 22897,4 | 99,3 |
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում | 4252 | 530,0 | 476,0 | 89,8 |
| Գրասենյակային նյութեր | 4261 | 635,0 | 446,6 | 70,3 |
| Տրանսպորտային նյութեր | 4264 | 3600,0 | 3159,9 | 87,8 |
| Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 555,0 | 551,3 | 99,3 |
| Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 700,0 | 694,4 | 99,2 |
| Ընթացիկ դրամաշնորհ | 4637 | 10200,5 | 10200,5 | 100,0 |
| Կապիտալ դրամաշնորհ | 4655 | 6300,0 | 6300,0 | 100,0 |
| Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 8000,0 | 6775,0 | 84,7 |
| Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդ. կազմակերպ. | 4819 | 19750,0 | 8435,5 | 42,7 |
| Պարտադիր վճարներ | 4823 | 2050,0 | 1652,4 | 80,6 |
| Պահուստային ֆոնդ | 4891 | 50000,0 | 49490,6 | 99,0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | **474236,7** | **447908,3** | **94,4** |

| Ծախսերի անվանումը | | Պլան | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|---|
| Շենք և շինությունների կառուցում | 5112 | 11034,8 | 10726,9 | 97,2 |
| Շենք և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 63417,6 | 53608,5 | 84,5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 180,0 | 0,0 | 0,0 |
| Վարչական սարքավորումներ | 5122 | 0,0 | 0,0 | 0,0 |
| Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 500,0 | 0,0 | 0,0 |
| Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 19000,0 | 18990,0 | 99,9 |
| Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 3653,2 | 2421,6 | 66,3 |
| Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | | -29507,2 | -19397,3 | 65,7 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **68278,4** | **66349,7** | **97,2** |

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 8.

ՈՐՈՇՈՒՄ 25-Ն. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Մ. Մարինոսյանը, Ա. Հովեյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության ՀՕ-337 օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2016թ. բյուջեի պահուստային ֆոնդից՝

1. Լեռնային Ղարաբաղի հանրապետության կառավարության հիմնադրած Արցախի ազգային վիճակախաղի 2016թ. դեկտեմբերի 28-ին կայանալիք 4-րդ խաղարկության 100 /հարյուր/ տոմսեր ձեռք բերելու նպատակով 4861 /այլ ընթացիկ ծախսեր/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Դաշտամիջյան ճանապարհների և ,,Աղի գոլ" կոչվող արհեստական ջրամբարի պատնեշի ընթացիկ վերանորոգման համար 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 950 000 /ինն հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
3. Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գետեոն Միքայելյան 6-րդ նրբանցք, 7-րդ անցուղի թիվ 3 հասցեում 2015թ. դեկտեմբերի 24-ին ծագած հրդեհի հետևանքով Վոլոդյա Բագրատի Ղազարյանին պատկանող խոտի հակերի դեզերը այրվել են: 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական

հոդվածով Վոլոդյա Ղազարյանին տրամադրել 200 000/ երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն:

4. ,,Ռազմիկ'' թատերական հիմնադրամի կողմից Եղեռնի 101-ամյա տարելիցին նվիրված ,,Վանա կատու'' ներկայացման դիտումը Գավառում կազմակերպելու համար՝ 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

| Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ | | |
| ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ | | |
| ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ | | |
| ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ | | |
| ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ | | |

ՀԱՐՑ 9.

ՈՐՈՇՈՒՄ 26-Ն ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Պ. Հակոբյանը

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ, 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և ,,Բյուջետային համակարգի մասին'' ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2016թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Հաշվի առնելով, որ Գավառ համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ների աշխատակիցները հունվար և փետրվար ամիսներին, /բացի տնօրենից, հաշվապահից և պահակից/ գտնվել են իրենց հաշվին արձակուրդում, ուստի ըստ հաշվարկված տարիֆիկացիաների ծախսային մասում պակասեցնել՝
1/ 08 բաժնի 2 խմբի 1 դասի /գրադարաններ/ գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիաներ/ տնտեսագիտական հոդվածը՝ 2565900 /երկու միլիոն հինգ հարյուր վաթսունհինգ հազար ինն հարյուր/ ՀՀ դրամով
2/ 08 բաժնի 2 խմբի 3 դասի /մշակույթի տներ/ գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիաներ/ տնտեսագիտական հոդվածը 1111100 /մեկ միլիոն մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամով
3/ 01 բաժնի 1 խմբի 1 դասի /օրենսդիր և գործադիր մարմիններ/ գործառնական դասակարգման 4111 /աշխատավարձեր/ տնտեսագիտական հոդվածը՝ 900 000 /ինն հարյուր հազար/ ՀՀ դրամով:
4/ 09 բաժնի 1 խմբի 1 դասի /նախադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիաներ/ տնտեսագիտական հոդվածը՝ 9273700 /ինն միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամով

5/ 09 բաժնի 5 խմբի 1 դասի /արտադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 4511 /սուբսիդիաներ/ տնտեսագիտական հոդվածը՝ 14752900 /տասնչորս միլիոն յոթ հարյուր հիսուներկու հազար ինն հարյուր/ ՀՀ դրամով:

2. Ծախսային մասում ավելացնել՝

1/ 09 բաժնի 1 խմբի 1 դասի /նախադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 4657 / այլ կապիտալ դրամաշնորհներ/ տնտեսագիտական հոդվածը 18403600 /տասնութ միլիոն չորս հարյուր երեք հազար վեց հարյուր/ ՀՀ դրամով՝ ,,Գավառի թիվ 5 մանկապարտեզի վերակառուցում'' ծրագրի շրջանակներում համայնքի 10 %- ի ներդրումը ապահովելու համար

2/ 08 բաժնի 4 խմբի 2 դասի /հասարակական կազմակերպություններ/ գործառնական դասակարգման 4819 /նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածը 10200000 /տաս միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամով՝ ,,Նոր Բայազետ'' բարեգործական հիմնադրամին Գավառի Կենտրոնական հրապարակի հիմնանորոգման աշխատանքների համար:

3. 09 բաժնի 5 խմբի 1 դասի /արտադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 4637 /ընթացիկ դրամաշնորհ/ տնտեսագիտական հոդվածով պլանավորված 10735500 /տաս միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը պակասեցնել 820000 /ութ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամով, որն ավելացնել նույն գործառնական դասակարգման 4655 /կապիտալ դրամաշնորհ/ տնտեսագիտական հոդվածին:

4. 05 բաժնի 1 խմբի 1 դասի /աղբահանում/ գործառնական դասակարգման տարեսկզբի ազատ մնացորդի՝ 16878500 /տասնվեց միլիոն ութ հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ և վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացման հաշվին՝ 1121500 /մեկ միլիոն մեկ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ ֆինանսավորվող 5121 /տրանսպորտային սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 18000000 /տասնութ միլիոն/ ՀՀ դրամով, որից՝ ավելացնել

1/ 05 բաժնի 6 խմբի 1 դասի /շրջակա միջավայրի պաշտպանություն/ գործառնական դասակարգման 5131 /աճեցվող ակտիվներ/ տնտեսագիտական հոդվածին 940000 /ինն հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ՝ տնկիների ձեռք բերման համար:

2/ 01 բաժնի 1 խմբի 1 դասի /օրենսդիր և գործադիր մարմիններ/ գործառնական դասակարգման 5122 /վարչական սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածին 480000 /չորս հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ՝ գույք և համակարգչային տեխնիկա ձեռք բերելու համար, իսկ 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ Գավառի քաղաքապետարանի շենքի մի հատվածի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար:

3/04 բաժնի 2 խմբի 4 դասի /ոռոգում/ գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ Արծվաքար թաղամասում ոռոգման ցանցի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար:

4/ 08 բաժնի 2 խմբի 1 դասի /գրադարաններ/ գործառնական դասակարգման 5113 /շենք և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածին 2795700 /երկու միլիոն յոթ հարյուր իննսունհինգ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ՝ ,,Գավառի քաղաքային գրադարան'' ՀՈԱԿ-ի կապիտալ վերանորոգման համար:

5/ / 08 բաժնի 2 խմբի 3 դասի /մշակույթի տներ/ գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին 202200 /երկու հարյուր երկու հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ՝ Մշակույթի տան շենքի մի հատվածի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար:

6/ 09 բաժնի 5 խմբի 1 դասի /արտադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 5112 /շենք և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածին 1171900 /մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասունմեկ հազար ինն հարյուր/ ՀՀ դրամ՝ ,,Գավառի արվեստի դպրոց'' ՀՈԱԿ-ի շենքի պատուհանների ճաղավանդակների կառուցման համար:

7/ 09 բաժնի 1 խմբի 1 դասի /նախադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 5113 /շենք և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածին 3710200 /երեք միլիոն յոթ հարյուր տասն հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ՝ ,,Գավառ թիվ 8 մանկապարտեզ'' ՀՈԱԿ-ի խոհանոցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար:

8/ Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացման հաշվին ֆինանսավորվող 06 բաժնի 4 խմբի 1 դասի /փողոցների լուսավորում/ 5112 /շենք և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածով պլանավորված 24884500 /քսանչորս միլիոն ութ հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամից 5778500 /հինգ միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը ֆինանսավորել տարեսկզբի ազատ մնացորդից:

5. 11 բաժնի 1 խմբի 2 դասի /պահուստային ֆոնդեր/ գործառնական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ տնտեսագիտական հոդվածով նախատեսված 72000000 /յոթանասուներկու միլիոն/ ՀՀ դրամը պակասեցնել 6900000 /վեց միլիոն ինն հարյուր հազար/ ՀՀ դրամով, միաժամանակ նույն գումարի չափով պակասեցնել պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը:
   Պահուստային ֆոնդից պակասեցված 6900000 /վեց միլիոն ինն հարյուր հազար/ ՀՀ դրամից 3000000 /երեք միլիոն/ ՀՀ դրամը ուղղել 05 բաժնի 1 խմբի 1 դասի /աղբահանում/ գործառնական դասակարգման 4655 /կապիտալ դրամաշնորհ/ տնտեսագիտական հոդվածին, իսկ 3900000 /երեք միլիոն ինն հարյուր հազար/ դրամի չափով պակասեցնել եկամտային մասը /հատված 1/ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ 1393 տողը:
6. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2016թ. մարտի 31-ի N344-Ն որոշման N2 հավելվածի հիման վրա 2016թ. ապրիլի 15-ին կնքված դրամաշնորհի հատկացման N37 պայմանագիրը, եկամտային մասը /հատված 1/ պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ` տող 1256 ավելացնել 24376400 /քսանչորս միլիոն երեք հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր/ ՀՀ դրամով: Նույն գումարի չափով պակասեցնել եկամտային մասը /հատված 1/ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ` տող 1393:

| Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ | | |
| ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ | | |
| ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ | | |
| ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ | | |
| ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ | | |

ՀԱՐՑ 10

ՈՐՈՇՈՒՄ 27. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ,,ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ'' ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի համայնքերի միության կողմից ,,Քաղաքապետերի դաշնագիր'' նախաձռենությանը անդամակցելու մասին գրությունը և նկատի ունենալով, որ 2008 թ. տրված մեկնարկից սկսած ,,Քաղաքապետերի դաշնագիրը'' դարձել է Եվրոպական և այլ երկրներում ՏԻՄ-երի կայուն էներգետիկ զարգացման ռազմավարությունների մշակմ ան և իրականացման գործոն, խրախուսելու և աջակցելու առաջատար նախաձեռնություն, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի` Եվրոպական հանձնաժողովի ,,Քաղաքապետերի դաշնագիր'' նախաձեռնությանը անդամակցելուն:

2. Լիազորել Գավառի քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանին ստորագրելու ,,Քաղաքապետերի դաշնագիրը'':

| Կողմ (8) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ | | |
| ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ | | |
| ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ | | |
| ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ | | |
| ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ | | |
| ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ